

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ**

ՀՀ, ք. Բյուրեղավան, 39/18

«Անդրանիկ և Հարություն» ՍՊ ընկերությունը հիմնադրվել է 1996թ.-ին, որը հետագայում վերանվանվել է «Բյուրեղ Ալկո» ՍՊԸ: 2002թ.-ից ստեղծվել է էթիլային սպիրտի արտադրությունը: 2004թ.-ին հիմնադրվել է գինու և կոնյակի արտադրությունը, որը շահագործվել է 2005թ.-ին: «Բյուրեղ Ալկո» ՍՊԸ-ն իր ուրույն տեղն է զբաղեցնում հանրապետության ոգելից խմիչքների արտադրության ոլորտում՝ ներկայացնելով սեփական արտադրության բարձրորակ սպիրտից պատրաստված օղիների լայն տեսականին: